

## Կարծիք

### Դավիթ Արթուրի Կարապետյանի՝

«Վախուշտի Բագրատիոնիի «Վրացական թագավորության նկարագրությունը»  
աշխատությունը որպես հայոց պատմության սկզբնաղբյուր» թեկնածուական  
ատենախոսության վերաբերյալ

Դավիթ Կարապետյանի «Վախուշտի Բագրատիոնիի «Վրացական թագավորության նկարագրությունը» աշխատությունը որպես հայոց պատմության սկզբնաղբյուր» թեկնածուական ատենախոսության թեման ունի անվիճելի գիտական կարևոր նշանակություն և՛ կովկասագիտության, և՛ հայագիտության տեսանկյունից: Վախուշտի Բագրատիոնիի «Վրացական թագավորության նկարագրությունը» աշխատությունը XV-XVIII դդ. հայոց պատմության, տնտեսական ու քաղաքական կյանքի ուսումնասիրության համար կարևորագույն աղբյուրներից մեկն է: Ատենախոսության Ներածությունում ներկայացված են ընտրված թեմայի արդիականությունը, կատարված հետազոտության նպատակներն ու խնդիրները, աշխատանքի գիտական նորույթը, ուսումնասիրության մեթոդաբանությունը, ժամանակագրական շրջանակները, ապա՝ աղբյուրների և օգտագործված գրականության խիստ ընդարձակ տեսությունը:

Ատենախոսությունը հղկված կառուցվածք ունի՝ բաղկացած Ներածությունից, երեք գլուխներից (իրենց համապատասխան երեքական ենթագլուխներով), Եզրակացություններից, Օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից և Հավելվածից: Ատենախոսության եզրակացությունների բաժնում տասը կետերով ամփոփված են աշխատանքի հիմնական դրույթները և հեղինակի եզրահանգումները: Աշխատանքի ամենավերջում տրված է աղբյուրների և գրականության ցանկը, ապա՝ Հավելվածը, որտեղ հեղինակը թարգմանաբար ներկայացրել է Վախուշտի Բագրատիոնիի երկից մի հատված՝ Թբիլիսիի նկարագրությունը, որը արժեքավոր հաղորդումներ է պարունակում նաև հայերի, տեղի հայկական եկեղեցիների վերաբերյալ:

Ավելորդ չճանրաբեռնելով ընդդիմախոսական կարծիքը ատենախոսության կառուցվածքի և շարադրանքի վերաբերյալ նկարագրությամբ՝ ստորև ներկայացվում են ատենախոսության վերաբերյալ դիտարկումները, առաջարկությունները և, դիտողություններն ու կատարված աշխատանքի արժանիքները:

*Ատենախոսության մեջ տեղ են գտել մի շարք վիճելի դրույթներ և եզրահանգումներ, ինչպես օրինակ՝*

• Դատելով գրականության ցանկում նշված լինելու և մի քանի անգամ հղելու հանգամանքից, կարելի է կարծել, որ ատենախոսության հեղինակին ծանոթ է Մ. Բրոսսեի՝ Վախուշտի Բագրատիոնիի «Աշխարհագրության» ֆրանսերեն-վրացերեն երկլեզվյա, գիտական արժեք ունեցող հրատարակությունը՝ «*Tsarévitch Wakhoucht, Description géographique de la Géorgie, d'après l'original autographe par M. Brosset, Saint-Petersbourg, 1842*»: Սակայն, պետք է ասել, որ ատենախոսության

հղումներում հիմնականում ընդամենը կրկնվում է այն միտքը, որ Վախուշտի Բագրատիոնիի «Աշխարհագրությունը» Մ. Բրոսսեի ուսումնասիրության առարկան է դարձել, կամ որ ֆրանսիացի գիտնականը հրատարակել է այն: Ավելի մանրամասն հարցին ծանոթանալու դեպքում տպավորություն է ստեղծվում, որ հեղինակը հիմնավոր պատկերացում չունի Մ. Բրոսսեի խմբագրությամբ և թարգմանությամբ կատարված այդ հրատարակության վերաբերյալ: Օրինակ, ատենախոսության 39-րդ էջում հեղինակը գրում է, որ «Վախուշտիի աշխատության ձեռագիր բնօրինակը իրենց ձեռքի տակ ունեցել և օգտագործել և նկարագրել են դեռևս Մ. Բրոսսեն և Մ. Ջանաշվիլին: Այն ունի ընդհանուր 187 էջ, որից դատարկ են թողնված մոտ 20-ը: Յուրաքանչյուր էջի վրա կա միջինը 53 տող, յուրաքանչյուր տողում՝ մոտ 14 բառ» (հղումներ №138, 139): Այնինչ, Մ. Բրոսսեի՝ 1842 թ. հղված հրատարակության ներածության 11-րդ էջում ասվում է, որ, ճիշտ է, Բրոսսեն օգտագործել է բնօրինակ ձեռագիրը, որը, սակայն, կազմված է 350 (ինչպես նաև հավելյալ 24 էջ), այլ ոչ 187 էջից, ինչպես գրում է հեղինակը: Բացի այդ, սրան հաջորդող էջերում Մ. Բրոսսեն, մանրամասն նկարագրում է ձեռագիրը, Վախուշտիի այս աշխատության կառուցվածն ու բովանդակությունը, ինչի մասին ևս ատենախոսը չի հիշատակում: Կարծում ենք, Վախուշտի Բագրատիոնիի այդ երկի ֆրանսերեն հրատարակության համեմատական քննությունն ու ուսումնասիրությունը, դրանում Մ. Բրոսսեի արժեքավոր դիտարկումներն ու ծանոթագրությունները միմիայն օգտակար կլինեին ատենախոսության հեղինակի համար:

• Ցանկալի էր, որ ատենախոսության հեղինակը Վախուշտի Բագրատիոնիի՝ Հայաստանի, ինչպես նաև Վրաստանի ու հարակից շրջանների վերաբերյալ տեղեկությունները համադրեր և քննել՝ լայնորեն օգտագործելով ժամանակի օսմանյան, սեֆյան, եվրոպական աղբյուրները, հատկապես որ դրանց հիմնական մասը հասանելի է նաև տարբեր լեզուներով թարգմանությամբ: Վախուշտի Բագրատիոնիի՝ Վրաստանի և Հայաստանի պատմության, աշխարհագրության, քաղաքական անցուղարձին վերաբերող հաղորդումները ստուգելուն և փոխարացնելուն մեծապես կարող էին նպաստել Կատերինո Ջենոյի, Ջոսաֆա Բարբարոյի, Յոհան (կամ Հանս Շիլտերգերի), Ամբրոջո Կոնտարինիի, Ժան Բատիստ Տավերնիեի (Gérard Monfort, *Les Six Voyages de J.-B. Tavernier en Perse et aux Indes*, Paris, 2004, հասանելի է նաև անգլերեն թարգմանությամբ), Մալիք շահ Հուսեյն Միսթանիի՝ «Թարիխ իհյա ալ-մուլուք» (հասանելի է նաև ռուսերեն թարգմանությամբ՝ Малик Шах-Хусайн Систани, Хроника воскрешения царей, пер. Е. Смирновой, Москва, 2000), Հասան Ռումլուի (Hasan Rūmlū, *Aḥsan al-tawārīk*, vol. I, ed. 'A. Navā'ī, Tehran, 1349 Š./1970; vol. II, ed. C. N. Seddon, Baroda, 1931; new ed., Navā'ī, Tehran, 1357 Š./1978; tr. Seddon, *A Chronicle of the Early Safawīs*, Baroda, 1934), Էնթրնի Ջենկինսոնի (Anthony Jenkinson, *Early Voyages and Travels to Russia and Persia*, vol.1, London, 1886; մասնավորապես 129-131, 146, 150-151 և այլ էջերում) և քննվող շրջանի նմանատիպ այլ աղբյուրների հաղորդած տեղեկությունների օգտագործումը ատենախոսության հեղինակի կողմից:

Ըստ երևույթին, ճիշտ կլիներ նաև օգտագործել վրաց և օտարերկրյա ճանաչված գիտնականների եվրոպական լեզուներով հրատարակված հետազոտությունները, որտեղ համապարփակ ու օգտակար անդրադարձեր կան հեղինակի կողմից քննվող պատմաշրջանի ու ատենախոսության մեջ քննվող որոշ հարցերի վերաբերյալ, տե՛ս օրինակ՝ V. Silogava, K. Shengelia, *History of Georgia: from the ancient times through the «Rose revolution»*. Tbilisi, 2007; R. G. Suny, *The making of the Georgian nation*. Bloomington: Indiana University Press, 1994; Florence Hellot-Bellier & Irène Natchkebin, *La Géorgie (entre Perse et Europe)*, Paris, 2009, L'Harmattan; Nodar Assatiani et Alexandre Bendianachvili, *Histoire de la Géorgie*, Paris, l'Harmattan; 1997; Alexandre Manvelichvili, *Histoire de la Géorgie*, Paris, Nouvelles Éditions de la Toison d'Or, 1951, և այլն:

• Ատենախոսության 59-րդ էջում, հեղինակը, ներկայացնելով Իսմայիլ I (1501-1524 թթ.) իշխանության գալն ու Սեֆյան Իրանի կազմավորման գործընթացը 16-րդ դարի առաջին տասնամյակում Օսմանյան կայսրության պես գորեղ հարևանի և հավանական ախոյանի հարևանությամբ, գրում է. «Երկու տերությունների (*իմա՝ Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի* խնամքը մերն է) բախումն անխուսափելի էր: Սեֆյանները պատերազմը ներկայացնում էին որպես կրոնական, սակայն իրականում այդ պատերազմների նպատակը Օսմանյան պետության դեպի արևելք ընդլայնումը կասեցնելն էր»:

Սա այն դեպքում, երբ ընդհուպ մինչև Սելիմ I (1512-1520 թթ.) իշխանության գալը, Սեֆյան Իրանի և Օսմանյան կայսրության միջև ռազմական որևէ խոշոր առճակատում չի եղել, ավելին՝ օսմանյան սուլթան Բայազիտ II-ը (1481-1512 թթ.) վարում էր բավական զգուշավոր քաղաքականություն Իրանի նկատմամբ՝ փաստացի ճանաչելով Իսմայիլին իրանական պետության գահին, և նույնիսկ դեսպանություն էր ուղարկում ու նամակագրություն վարում Իսմայիլի հետ՝ ընդհուպ շնորհավորական նամակ հղելով վերջինիս:

Ավելին, հակառակ հեղինակի այն պնդմանը, թե Սեֆյաններն էին պատերազմին տալիս կրոնական երանգավորում. պետք է ասել, որ հենց օսմանյան արքունիքն էր փորձում Սեֆյանների դեմ պատերազմելու կրոնական հիմնավորում ստանալ Օսմանյան կայսրության մուսուլման սուննի բարձրաստիճան հոգևորականներից առ այն, որ Սեֆյանները շիա հերետիկոսներ են, և վերջիններիս դեմ պատերազմը սրբազան է: Սրան հավելենք նաև այն, որ հենց Սելիմի հրամանով օսմանա-սեֆյան պատերազմների նախօրյակին՝ 1513 թ., սրի քաշվեցին Օսմանյան կայսրության փոքրասիական շրջանների մոտ 40.000 շիաներ:

• Վիճելի է հեղինակի այն մոտեցումը, թե Սեֆյան Իսմայիլը Թավրիզը գրավել է 1499 թ. (էջ 59), այնինչ հայտնի է, որ Իսմայիլը Թավրիզը գրավել է միայն 1501 թ. Այ Կոյունլու սուլթան Ալվանդի նկատմամբ հաղթանակ տանելուց հետո, ընդ որում գրավել է անարգել<sup>1</sup>:

<sup>1</sup>Ավելի մանրամասն տես՝ J. Woods, *The Aqqyunlu: Clan, Confederation, Empire* (Revised and Expanded Edition), 1999, p. 163:



● Որոշակի անհամապատասխանություն կա երկրորդ գլխի «XV-XVIII դարերի հայոց պատմությունը ըստ Վախուշտի Բագրատիոնիի» վերնագրի և նույն գլխի ենթավերնագրերի, մասնավորապես երրորդ ենթավերնագրի «2.3 XVIII դարի առաջին կեսի իրադարձությունները Վախուշտի Արքայազնի երկում» դեպքում: Այս ենթավերնագրում Վախուշտի արքայազնի հաղորդած տեղեկությունները առավելապես վերաբերում են Վրաց թագավորության XVIII դարի առաջին կեսի քաղաքական անցուդարձին և հետաքրքիր է, որ հեղինակն ինքը ևս խոստովանում է, որ Վախուշտի Բագրատիոնիի աշխատության այս հատվածներում Հայաստանի և հայերի վերաբերյալ հաղորդումները խիստ սակավաթիվ են: Կարելի է կարծել, որ, հետագայում երկրորդ գլխում վերնագրային շտկում իրականացնելով այս խնդիրը հնարավոր կլինի դյուրությամբ հարթել:

*Ատենախոսությունը գերծ չէ նաև ուղղագրական, լեզվաոճական սխալներից և տեխնիկական թերացումներից. այսպես օրինակ՝*

● Ատենախոսության 26-րդ էջում հեղինակը (հղում № 96) հղում է ոչ թե Օ. Գվիլավայի՝ բուն աշխատությունը՝ «*Материалы к биографии Вахушти Багратиони // Труды Тбилисского университета, т. 91. Серия востоковедения, 2. - 1960. - стр. 413-421*», այլ [vostlit.info](http://vostlit.info) կայքի այն էջը, որտեղ ընդամենը տեղադրված է հիշյալ հոդվածի թվայնացված տեքստը:

● Գրականության ցանկում հեղինակը գրեթե բոլոր դեպքերում բաց է թողել վրացալեզու գրականության և հրատարակված աղբյուրների հրատարակության վայրերի նշումը:

*Հարկ է նշել, որ վերոնշյալ դիտարկումները, առաջարկությունները և դիտողությունները հեշտությամբ կարող են շտկվել հեղինակի կողմից և օգտակար կլինեն ատենախոսին՝ աշխատության հետագա գիտական լրամշակման և հրատարակման պարագայում:*

*Մյուս կողմից, հարկ է արձանագրել ատենախոսությունը հաջողված գիտական հետազոտություն է և ունի մի շարք կարևոր արժանիքներ, մասնավորապես՝*

● Ատենախոսության հեղինակին հիմնականում հաջողվել է քննաբար ներկայացնել ատենախոսության մեջ առաջ քաշված խնդիրները, ընդգծել և ներկայացնել թեմայի արդիականությունը և նորույթը:

● Հաշվի առնելով նաև իրականացված հետազոտության՝ աղբյուրագիտական քննության բարդ աշխատանքը, կարելի է համոզված լինել, որ Դ. Կարապետյանին հիմնականում հաջողվել է, համակողմանիորեն քննելով աղբյուրը, ներկայացնելով հեղինակի և աղբյուրի շարադրման հետ կապված կարևոր մանրամասները, վեր հանել Հայաստանի և հայերի վերաբերյալ վրացալեզու աղբյուրի կարևոր հաղորդումներն ու տեղեկությունները: Հարկ է նշել, որ այս առումով առավել հաջողված է ատենախոսության վերջին երրորդ գլուխը:


● Աշխատության աղբյուրագիտական հենքը բավականաչափ հարուստ է. բացի մենագրություններից և հոդվածներից հեղինակն օգտագործել է թեմայի վերաբերյալ տարալեզու աղբյուրների հիմնական մասը:

● Աշխատանքը կարելի է բնորոշել պատմական նյութի հմուտ մշակմամբ և նրա մեկնաբանությամբ: Հեղինակը տիրապետում է այդ նյութին և դրսևորում մասնագետին բնորոշ հետազոտական հմտություններ: Ատենախոսությունն ունի արդիական հնչեղություն, գիտատեսական, գործնական-կիրառական, ինչպես նաև քաղաքական որոշակի նշանակություն:

● Ատենախոսությունն ունի սահուն շարադրանք և իր բոլոր հատվածներում ընդհանուր առմամբ համոզիչ է, հստակ ու տրամաբանական: Գիտական չափանիշներին համապատասխանում է նաև եզրութաբանական ապարատը: Ատենախոսի քննարկած հիմնախնդիրներն արդիական են, մեթոդաբանորեն հղկված:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ Դավիթ Կարապետյանի՝ «Վախուշտի Բագրատիոնիի «Վրացական թագավորության նկարագրությունը» աշխատությունը որպես հայոց պատմության սկզբնաղբյուր» թեմայով ատենախոսությունը հաջողված գիտական ուսումնասիրություն է և բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին: Ուստի միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում գործող՝ ԲՈԿ-ի գիտական աստիճաններ շնորհող Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդին Դավիթ Արթուրի Կարապետյանին Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ շնորհել իր հայցած գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝  
ՀՀ Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող,  
պ.գ.թ. դոցենտ Գ. Ա. Մարգարյան



28.08.2020 թ.

Հաստատում եմ՝  
ՀՀ Արևելագիտության ինստիտուտի փոխտնօրեն,  
պ.գ.թ. դոցենտ Ռ. Պ. Ղազարյան

